

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /նախկինում <<ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ/ վերանվանվել է 03.02.2012թ.-ին:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն համաձայն իր քաղաքականության տրամադրում է առևտրային, գյուղատնտեսական, սպառողական վարկեր և երաշխիքներ: Վարկի մարումը և տոկոսների վճարումը կատարվում է համաձայն պայմանագրի ժամանակացույցի: Առևտրային, գյուղատնտեսական և ֆիզիկական անձանց տրամադրվող սպառողական վարկերը, երաշխիքները տրամադրվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի: Վերոնշյալ վարկերի վարկավորման պայմանները ներկայացվում են ստորև:

Սպառողական վարկերի տրամադրման պայմաններ՝

	Առանց գրավի ապահովվածության սպառողական վարկեր	Գրավի ապահովվածությամբ սպառողական վարկեր	ԱՊՊԱ վարկ
Արժույթը	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Վարկի գումարը	50,000 ՀՀ դրամ-2,000,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ-30,000,000 ՀՀ դրամ	25,000 ՀՀ դրամ-100,000 ՀՀ դրամ
Վարկի տևողությունը	1-18 ամիս	1-36 ամիս	3-6 ամիս
Վարկի տարեկան տոկոսադրույքը	24%	24%	24%
Վարկի տրամադրման վճար (միանվագ)	3.5%	3%	1,000 ՀՀ դրամ
Վարկի սպասարկման ամենամսյա վճար	1.1-1.3%	1-1.3%	1%
Ապահովվածությունը	1-3 անձանց երաշխավորություն (վերոնշյալը չի վերաբերում ՈՒՎԿ հետ համագործակցող այն կազմակերպությունների աշխատակիցներին, որոնց հետ առկա է պայմանագիր, իրենց աշխատակիցներին վարկեր տրամադրելու վերաբերյալ):	Շարժական (ավտոմեքենա, սարքավորումներ՝ 3 մլն. դրամից ոչ պակաս արժեքով) և/կամ անշարժ (բնակարան, բնակելի տուն, այլ նշանակության շինություն, հող) գույք, երաշխավորություն:	Հաճախորդի ֆինանսական հոսքերը հիմնավորող փաստաթղթեր:

Առևտրային վարկերի և գյուղատնտեսական վարկերի տրամադրման պայմաններ՝

	ՀՀ դրամով բիզնես վարկեր	ԱՄՆ դոլարով կամ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով բիզնես վարկեր	Վարկեր առանց երաշխավորության և գրավի	Գյուղատնտեսական վարկեր
Վարկի գումարը	200,000 ՀՀ դրամ-15,000,000 ՀՀ դրամ	500 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ- 40,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ,	200,000 ՀՀ դրամ-600,000 ՀՀ դրամ	100,000-4,000,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման վճար	3.5%-3.7%	1.5%-3%	4%	3%-4%
Տարեկան տոկոսադրույք	24%	18%-22%	24%	22%-24%
Սպասարկման ամենամսյա վճար	0%-1%	0%-0.8%	1.1%	0%
Վարկի ժամկետը	3-24 ամիս	3-42 ամիս	3-12 ամիս	3-24 ամիս
Արտոնյալ ժամկետ	0-4 ամիս	0-9 ամիս	0-1 ամիս	0-6 ամիս

Ընկերության կողմից երաշխիք տրամադրվում է ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ առավելագույնը 3,000,000 ՀՀ դրամի չափով, 24 ամիս ժամկետով և երաշխիքի գումարի 15%-ի չափով վարձավճարով:

Առևտրային և գյուղատնտեսական վարկերի ապահովման ձևերը՝ երաշխավորություն և/կամ գրավ՝ կախված գումարի մեծությունից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով չի ներգրավում փոխառություններ, հետևաբար պահպանում է միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» և «Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը» նորմատիվները: Հաշվետու եռամսյակի ընթացքում այդ նորմատիվների գծով խախտումներ չկան:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատողների քանակը հաշվետու եռամսյակում՝ 16 անձ:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի պայմանների մանրամասներին և 2015թ.-ի 1-ին եռամսյակի միջանկյալ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթին կարող եք ծանոթանալ Ընկերության վեբ. կայքում:

- Գործադիր տնօրեն
- Հասցե
- Հեռախոս
- Ֆաքս
- Էլ. փոստ
- Վեբ. կայք



Արտաշես Տոնոյան
 0007, Երևան, Արշակունյաց 69
 (10) 44 56 64,
 (10) 44 56 64
 info@goodcredit.am
 http://www.goodcredit.am